ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.05.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2019/13

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Մասնակցությամբ՝

Պատվիրատուի ներկայացուցիչ՝ Գ. Ջանջուղազյան

«Այթիոռեսուրսիս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Դ. Շահբազյան

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Այթիոռեսուրսիս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

Չկայացած հայտարարել Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգը:

Սոցիալական ապահովության ծառայության կողմից գրություն է ուղարկվել Բողոքները քննող անձին, համաձայն որի՝ 2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից հայտարարված ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2019թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ 487-Ա որոշումը՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղարկելու վերաբերյալ:

2. <u>ԳԲՔԱ-LO-2019/13 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Այթիոեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝

Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

Չկայացած հայտարարել Սոցիալական ապահովության ծառայության կարիքների համար «Ծրագրային ապահովման սպասարկման» ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6» ծածկագրով ընթացակարգը:

Սոցիալական ապահովության ծառայության կողմից գրություն է ուղարկվել Բողոքները քննող անձին, համաձայն որի՝ 2019 թվականի մարտի 7-ին Սոցիալական ապահովության ծառայության կողմից հայտարարված ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ 2019թ. մայիսի 2-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվել է թիվ 487-Ա որոշումը՝ ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղարկելու վերաբերյալ:

ՀՀ Կառավարության 02.05.2019թ. թիվ 487-Ա որոշման համաձայն՝

1. ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգը չեղարկվել է:

2. Թույլատրվել է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ծառայությանը ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունները ձեռք բերել մեկ անձից՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացված բողոքը պետք է թողնել առանց քննության, հաշվի առնելով, որ ՀՀ Կառավարության 02.05.2019թ. թիվ 487-Ա որոշման հիման վրա ՍԱԾ ԳՀԾՁԲ-19/6 ծածկագրով ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների գնման նպատակով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգը չեղարկվել է և թույլատրվել է Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովության ծառայությանը ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունները ձեռք բերել մեկ անձից՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Այթիռեսուրսիս» ՍՊԸ-ի կողմից 18.04.2019թ. ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ